



«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ  
ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ  
ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ  
ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝

Արժեքային համակարգի ձևավորումը <<Ֆիզիկա>> առարկայի  
դասավանդման ընթացքում

Առարկան՝ Ֆիզիկա

Հետազոտող ուսուցիչ՝ Վաչիկ Ասատրյան

Ուսումնական հաստատություն՝ Օհանավանի միջնակարգ դպրոց

Երևան 2023

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն	3
Դպրոցը և արժեքները	5
Արժեքայի համակարգի ձևավորման խնդիրները <<Ֆիզիկա >> առարկայի դասավանդման ընթացքում	7
Արժեքային համակարգ	10
Եզրակացություններ և առաջարկություններ	13
Օգտագործված գրականության ցանկ	14

## Ներածություն

Մեր երկրում աշակերտների արժեքային համակարգի ձևավորումը ներառված է ՀՀ հանրապետության պետական չափորոշչում՝ որպես հենց կրթության բովանդակային բաղադրիչ: Յուրաքանչյուր ուսումնական առարկայի մասով սովորողների պատրաստվածությունը ներկայացվող գիտելիքային պահանջների մեջ առանձին կետով նաև նշվում է արժեքները և դրանց ձևավորումը, որոնք պետք է տա դպրոցը:

<<Արժեհամակարգ>> հասկացությունը մանկավարժական գիտության մեջ ընթրնվում է բավական լայն շառավիղով: Առավել ընդունված է այն ընկալումը որ արժեհամակարգը մարդու բարոյական, գեղագիտական, հոգևոր, իմացական, մշակութային և էթնիկական արժեքների համախումբն է, որը անհրաժեշտ է անձի ներդաշնակ, բազմակողմանի ձևավորման զարգացման համար:

Ուսուցումն ու դաստիարակությունը անխզելի միասնություն են կազմում իմաստավից և խոսել միայն ուսումնադաստիարակչական աշխատանքների կազմակերպան մասին;

Թեև ուսուցմամբ կարելի է դաստիարակչական որոշակի խնդիրներ լուծել, սակայն մատաղ սերնդին հանրության համար կարևոր նշանակություն ունեցող արժեքների պատվաստումը իրականացվում է հիմնականում այլ գործոնների շնորհիվ: Դա ժողովրդավարական համակարգի տարրերի առկայություն է հասարակական կառուցվածքներում, ուսումնական գործընթացի ընդհանուր կուլտուրան է կրթական համակարգում հաստատված բարոյահոգեբանական առողջ մթնոլորտը, սովորողների և ուսուցիչների հարաբերությունների ժողովրդավարական ոճը, ի վերջո օրենքի գերակայության հաստատումն ու նրա հարգումը կրթության բոլոր սուբյեկտների կողմից:

<<Մնալով որպես քաղաքակրթության նվաճումների, սոցիալական փորձի ու գիտելիքի ավանդական միջոց կրթությունը վերաճել է հասարակություն հումանիտարացմանը նպաստող գործոնի և միտված է զարգացնելու մարդու հոգևոր արժեքները հասարակական համակեցության, հանդուրժողականության համագործակցային որակները և ձևավորելու ապագայի մարտահրավերներին պատրաստ մարդ>> :

Առանձնապես կարևորելով հանրակրթության պետական կրթակարգում ընդգծված պահանջը կարողությունների, հմտությունների և որոշակի արժեքային համակարգերի ձևավորման վերաբերյալ: Այս հետազոտական աշխատանքում փորձենք հասկանալ, թե ինչպես է ձևավորվում աժեքային համակարգը ֆիզիկայի դասերին:

Քաղաքակրթության զարգացման ողջ պատմության ընթացքում ֆիզիկական ամենաեական ազդեցությունն է ունեցել գիտատեխնիկական առաջընթացի վրա, ինքն էլ զարգացել է այդ առաջընթացին զուգահեռ: Ֆիզիկայի դասընթացի ուսումնասիրությունը թույլ է տալիս ձևավորել մտածող, ստեղծագործող և ժամանակի բոլոր մարտահրավերներին պատրաստ, ճկուն և մրցունակ քաղաքացիներ:

Հետազոտության նպատակն է բացահայտել, թե սովորողների մեջ ինչպիսի արժեքային համակարգ է ձևավորվում ֆիզիկա առարկայի դասավանդման ընթացքում:

***Հետազոտության խնդիրներն են՝***

1. Ոսումնասիրել թեմային վերաբերող գիտաուսումնական գրականությունը,
2. Բացահայտել արժեքային համակարգի ձևավորման ուղիները և միջոցները
3. Բացահայտել ֆիզիկա առարկայի դերը արժեքային համակարգի ձևավորման գործում:

***Հետազոտության ընթացքը, տվյալների հավաքագրումը:***

Հետազոտությունը կատարել ենք բոլոր առարկաների ընթացքում համագործակցելով կոլեգաների հետ:Նաև կապ հաստատելով աշակերտների ծնողների հետ :

Մեծ ուշադրություն ենք դարձրել սովորողների վարքին և բնավորությանը հետազոտությունից առաջ և հետո:

## Դպրոցը և արժեքները

Երեխաների կրթության մասին խոսելիս՝ մենք հաճախ օգտագործում ենք <<արժեքներ >> հասկացությունը: Բոլորս կարևորում ենք արժեքների ձևավորումը գալիք սերնդի մոտ և միգուցե այդ բառին ինչ-որ ենթագիտակցական իմաստ ենք հաղորդում փորձենք ձևակերպել թե ինչ է ի վերջո <<արժեք>>ասածը:

Արժեքը երևույթ է մեր կյանքում որի դիմաց մենք գին ենք վճարել: Վճարի արժույթը կարող է տարբեր լինել՝ տվայտանքներ, հույզեր, այլ արժեքների գոհաբերություն, հարազատների հայրենակիցների կամ նախնիների կորուստ, կորցրած հող հայրենիք և այլն: Արժեքը հնարավոր չէ ստանալ հեշտությամբ այն պետք է վերապրել անցկացնել քո միջով, զգալ ու գիտակցել: Այդ ամենի դիմաց մենք ստանում ենք իմաստներ, քանի որ արժեքներն են իմաստավորում կյանքը առանց արժեքների կյանքը դատարկ է: Հեշտ, առանց կորուստների և հաղթահարումների ապրելը երբեք չի երջանկացնում հենց այն պատճառով, որ չի բերում արժեքների ձևավորման:

Արժեքների մեծ մասը սնվում է էթիկական նորմերից, ձևավորվում է դրանց շնորհիվ:

Էթիկական նորմերը անհրաժեշտ է մարդկանց համակեցությունը ապահովելու համար՝ դրանք պարտադրում են հրաժարվել ցանկալիյից հանուն ընդհանուր շահի: Դրանք տարբեր են ոչ միայն տարբեր հասարակություններում, այլև անգամ հասարակության տարբեր շրջանակներում, նույն երկրի տարբեր տարացքներում:

Նորմերը տարբեր են քաղաքներում և գյուղերում էթիկական նորմերը մեզ թելադրում են վարքագիծ, և որքան դրանք ավելի պահանջկոտ են, այնքան ավելի լուրջ արժեհամակարգ է պետք ձևավորել, որպեսզի մարդը բնականորեն դրանց համապատասխանի: Զարգացած մշակույթները ունեն զարգացած էթիկական նորմեր: Երբ դրանք քայքայվում են, պահանջները նվազում են, առաջանում են արժեհամակարգային խնդիրներ: Ահա թե ինչու առաջին հայացքից անվտանգ թվացող տարատեսակ <<ազատությունները>> իրենց հետ մեծ վտանգներ են բերում: Երբ փլուզվում են արժեքները, խաղտվում է համակեցությունը և տարածվում անբարոյականությունը: Մարդիկ դժբախտանում են տնտեսությունը անկում է ապրում, հանցագործությունները դառնում են համատարած, կյանքը կորցնում է իմաստի զգալի մասը մարդիկ սկսում են հեշտությամբ իրար կոտորել:

Հենց այդ պատճառով է, որ կրթության հենքը և գլխավոր իմաստը պետք է դառնա արժեհամակարգի ձևավորումը: Դպրոցը պետք է լինի օրինակելի տարածք, ուր հաստատուն են լինում էթիկական նորմեր, ուր աշակերտները սովորում են դրանց համապատասխանել:

Հաճախ դպրոցը ստիպված է պայքարել հանրության մեջ տարածված արատների դեմ և այդ պայքարում պարտավոր է հաղթել:

Դպրոցում կյանքը չի կարող հեշտ լինել երեխայի համար՝ նա պետք է զգա և՛ ցավ և՛ ուրախություն , ունենա թե, դժվարություններ թե հաղթանակներ:Դպրոցում աշակերտը պետք է ընկալի համակեցության նորմերի իմաստը և ընդունի դրանք:

Այդ ամենի պտուղը կլինեն իրական արժեքներ այլ ոչ թե թելադրված, անգիր արած, բայց աշակերտի համար ոչինչ չնշանակող ճշմարտությունները:Եթե մենք կարողանանք կառուցել դպրոցներ որոնք կձևավորեն արժեքներ աճող սերնդի համար, կունենանք աշխարհի ամենալավ և ամենախմաստալից կրթական համակարգը:

## Արժեքային համակարգի ձևավորման խնդիրները <<Ֆիզիկա>> առարկայի դասավանդման ընթացքում

Գաղտնիք չէ, որ այսօր հայ աշակերտի արժեքային համակարգը խարխիված է, իսկ արժեքները խեղաթյուրված, շատ շրջանավարտներ այսօր չունեն ամուր հոգևոր առանցք, պատկերացում չունեն վարքի բարոյական մոտիվների իսկական արժեքի մասին, չեն գիտակցում դրանց դերը իրենց ուղին ընտրելիս, մեծամասամբ նյութապաշտ են: Անհրաժեշտ է պարզ գիտակցել, որ դպրոցի նպատակը կիրթ, մարդասեր, հոգևոր արժեքներով հարուստ, ակտիվ, բարձր բարոյականության տեր, իր հայրենիքը սիրող մարդու դաստիարակությունն է:

Առդի տնտեսական բարդ պայմաններում դպրոցի համար այդ նպատակին հասնելը հեշտ չէ: Յուրաքանչյուր ուսուցչի, այդ թվում նաև ֆիզիկայի ուսուցչի առաջ կանգնած է առարկայի ուսումնական դասընթացի նյութերով արժեքային համակարգի ձևավորման, սովորողների անձի դաստիարակության խիստ բարդ խնդիր է:

Որպեսզի ֆիզիկա առարկան յուրաքանչյուր աշակերտի համար անձնային նշանակություն ստանա, անհրաժեշտ է, որ դասի ընթացքում ստեղծվի ստեղծագործական, համագործակցության մթնոլորտ, խրախուսվի իմացական ցանկացած գործընթաց, խրախուսվի յուրաքանչյուր նախաձեռնություն, յուրաքանչյուր իմացական փորձ: Ֆիզիկայի դասերին անհրաժեշտ է լուծել նաև դաստիարակչական խնդիրներ: Սովորողներին ծանոթացնել ֆիզիկոսների հայտնագործություններին ու կենսագրությանը՝ որպես անձի դաստիարակության միջոցի: Կենսագրական նյութը պետք է կապված լինի կոնկրետ նյութի հետ, ներառվի ընթացիկ նյութի շարադրման տրամաբանության մեջ: Անհրաժեշտ է սովորողների գիտակցությանն հասցնել այն, թե կոնկրետ ինչ է արել այս կամ այն գիտնականը, ինչպես է նրա հայտնագործությունները կամ գյուտերը ծառայում մարդկության բարօրությանը: Կենսագրական նյութը պետք է խթանի ուսումնական բարդ նյութի յուրացումը: Այս դեպքում նոր նյութի մատուցումը պետք է սկսվի գիտնականի գյուտարարական տաղանդը նպատակին հասնելու նրա աշխատասիրությունն ու համառությունը ցույց տվող անջնջելի, հուզականորեն հագեցած օրինակով: Կարևոր է սովորողներին ծանոթացնել գիտնականի մտածողության ոճին, աշխատանքի արդյունքները մարդկանց պրակտիկ կարիքներին ծառայեցնելու նրանց ձգտմանը, նրանց բարձր քաղաքացիականությանը: Հիմնարար ֆիզիկական տեսությունների և գիտափորձերի հետազոտության մեթոդների ուսումնասիրության հիման վրա սովորողների մեջ պետք է ձևավորել պատկերացումներ անձի բարոյական հիմքերի առաջնահերթության մասին, դրվի սովորողների ռազմահայրենասիրական,

գեղագիտական, հոգևոր դաստիարակության հիմքերը, զարգացնել հուզական-արժեքային մտածողություն, քննախույզ մտածողություն, դաստիարակել քաղաքացի, հումանիստ և խաղախության պայքարի մարտիկ: Ձևավորել ժողովրդավարության մշակույթի տարրեր, ձևավորել գիտական աշխարհայաց և ստեղծագործական մտածողություն: Ֆիզիկայի դասերի պրակտիկ ուղղվածությունը ձևավորում է ստացված գիտելիքներն ու հմտությունները առողյա կյանքում (Կենցաղ, էկոլոգիա, առողջության պահպանում, շրջակա միջավայրի պահպանում, անվտանգության տեխնիկա և այլն) օգտագործելու կարողություն:

Այսպիսով, ֆիզիկայի դասերին դաստիարակության խնդիրը պետք է հիմնված լինի մարդկային գործոնի գաղափարի օգտագործման վրա՝ որպես գիտության գործառույթյան որոշիչ սկիզբ, ուսուցչի ակտիվ կենսական դիրքորոշումը նրա գիտելիքների և հետաքրքրությունների լայնույթը, խոր համոզմունքով և հուզականորեն հագեցած ուսումնական նյութի շարադրման բարձր մակարդակը շատ առումներով կապահովեն ֆիզիկայի ուսուցչի դաստիարակչական աշխատանքների հաջողությունը :

Հանրակրթական դպրոցի ֆիզիկա առարկայի ուսուցման նպատակն է՝ զարգացնել սովորողների՝ բնության ճանաչողության մեթոդներին տիրապետելու, ֆիզիկական երևույթները բացատրելու և տարբեր իրավիճակներում դրանք կիրառելու հմտություններ, ձևավորել սովորողների գիտական աշխարհայացի և ուսումը շարունակելու համար անհրաժեշտ հիմքեր, նպաստել նրանց արժեհամակարգի ձևավորմանը:

Քաղաքակրթության զարգացման ողջ պատմության ընթացքում ֆիզիկան ամենաէական ազդեցություն է ունեցել գիտատեխնիկական առաջընթացի վրա, ինքն էլ զարգացել է այդ առաջընթացին զուգահեռ: Ֆիզիկայի դասընթացի ուսումնասիրությունը թույլ է տալիս ձևավորել մտածող, ստեղծագործող և ժամանակի բոլոր մարտահրավերներին պատրաստ, ճկուն և մրցունակ քաղաքացիներ: հանրակրթական դպրոցում ֆիզիկա առարկայի ուսումնական ծրագիրը կառուցվում է հիմնարար գաղափարների հենքի վրա՝ պարուրաձև սկզբունքով՝ հիմնական դպրոցի ուսումնասիրվող նյութը ընդլայնելով և խորացնելով ավագ դպրոցում: Հիմնարար գաղափարների շուրջ առարկայական ծրագրի կառուցումը հնարավորություն է ընձեռում արդյունավետ ապահովելու ներառարկայական և միջառարկայական կապերը՝ նպաստելով սովորողների ընդհանրական գիտական աշխարհայացի ձևավորմանը: ուսումնառության արդյունքների գնահատումը իրականացվում է ուսումնական և դասավանդման գործընթացների արդյունավետությունը պարզելու և դրանց վրա ներազդելու նպատակով:



Գնահատման միջոցով հավաքվում են փաստեր և ապացույցներ աշակերտի անհատական առաջընթացի ու չափորոշչով սահմանված վերջնարդյունքների ձևավորման մասին:

Գնահատումը պետք է նպատակաուղղված պետք է լինի հանրակրթության պետական չափորոշչում սահմանված կարողությունների ձևավորմանը և զարգացմանը: Հանրակրթական դպրոցի ֆիզիկա առարկայի բովանդակությունը կառուցված է գիտության, տեխնիկայի, տեխնոլոգիաների և մշակույթի ժամանակակից նվաճումներին համապատասխան, ունի տրամաբանական հաջորդականություն:

**2.** Նյութի ներկայացման հաջորդականությունը հիմնված է սահմանափակ թվով հիմնարար գաղափարների վրա: Հիմնարար գաղափարներից են բխում ուսումնասիրության համար ընտրված բոլոր օրենքներն ու սահմանումները

**3.** Նախնական փուլում սովորողների համար անհրաժեշտ մաթեմատիկական ապառառի բացակայությունը թույլ չի տալիս ամբողջությամբ ներկայացնել հիմնական օրենքները և խնդիրները լուծելու մեթոդները: Հետևաբար առարկայի բովանդակությունը կառուցված է փուլային սկզբունքով՝ պարզից բարդ:

**4.** Ֆիզիկա առարկայի բովանդակությունը ներկայացվում է պարուրածն սկզբունքով. բնագիտության դասընթացի ընթացքում ուսումնասիրված նյութը ընդլայնվում և խորացվում է հիմնական դպրոցի ֆիզիկայի դասընթացում, իսկ հիմնական դպրոցի ուսումնասիրված նյութը՝ ավագ դպրոցում՝ ապահովելով առարկայի դասավանդման շարունակությունը:

**5.** առարկայի ուսումնասիրման նյութի բովանդակությունը ներկայացվում է սովորողների տարիքային առանձնահատկություններին համապատասխան, որպեսզի նրանք հնարավորություն ուենան ինքնուրույն կամ ուսուցչի ուղորդմամբ յուրացնել այն:

**6.** Ավագ դպրոցի ֆիզիկա առարկայի բովանդակությունը հնարավորություն է ընձեռնում սովորողներին հետագայում մասնագիտանալու այնպիսի ոլորտներում որտեղ ֆիզիկան ունի էական նշանակություն:

**7.** Ֆիզիկա առարկայի բովանդակությունը կառուցվում է այնպես, որ գիտելիքների և կարողությունների զարգացմանը զուգընթաց այն նպաստում է սովորողների վերաբերմունքի և արժեքային համակարգի ձևավորմանը և սոցալական

հմտությունների զարգացմանը:

## **Արժեքային համակարգ**

Սույն բաղադրիչով նախատեսված համակարգը արտահայտվում է սովորողի համապատասխան գործողությունների, վերաբերմունքի և վարքի միջոցով

1. Այս բաղադրիչի նպատակն է ձևավորել անձ և քաղաքացի, որը պետք է՝

ա . Գիտակցի սեփական մշակույթի՝ լեզվի, պատմության արվեստի, ավանդույթների ազգային այլ արժեքների կարևորությունն ու նշանակությունը և լինի դրանց կրողը,

բ . Հարգի Հայաստանի պետական խորհրդանիշները, լինի հայրենասեր, կարևորի ազգային հիմնախնդիրներին լուծման գործում իր մասնակցության անհրաժեշտությունը,

գ. Գիտակցի, որ գիտությունը արդիական տեխնոլոգիաները, կրթության մեծագույն արժեքներ են ժամանակակից աշխարհում,

դ . Գիտակցի, որ իր համար կարևորագույն արժեքներ են գիտելիքները, աշխատանքային հմտությունները մասնագիտական վարպետությունը:

ե. Կարևորի բարոյական չափանիշները և քրիստոնեական ու համամարդկային արժեքները, լինի ազնիվ գթասիրտ, արդարամիտ, օրինապահ, բարեկիրթ:

զ. Կարևորի գեղագիտական արժեքները , գևահատի գեղեցիկը բարին ու ճշմարիտը

է. Գիտակցի իր տեղն ու դերն ընտանիքում և հասարակության մեջ , լինի նախաձեռնող, դրսևորի արժանավայել պահվածք,

ը. Գիտակցի ծնողների, տարիքով մեծերի և փոքրերի, ընկերների ու համայնքի նկատմամբ հարգանքի դրսևորման կարևորությունը,

թ. Հարգի մարդու իրավունքներն ու հիմնարար ազատությունները, լինի մարդասեր, հանդուրժող , քաղաքակիրթ վերաբերմունք դրսևորի ուրիշ ժողովուրդների ներկայացուցիչների և նրանց մշակույթների հանդեպ,

ժ. Անաչառորեն գևահատի իր ուժերն ու կարողությունները՝ բացառելով սեփական անձի թերագևահատումը կամ գերագևահատումը,

ժա. դրսևորի աշխատասիրություն հնարամտություն, նպատակադրվածություն, արժևորի ու գևահատի սեփական և այլոց աշխատանքը,

ժբ. Մշտապես հոգ տանի իր առողջության մասին, կարևորի մարմնակրթության դերը, հետեվողական լինի առողջ ապրելակերպի և անվտանգ կենսագործունեության կանոների կիրառման գործում:

Մեր օրերում սովորողների գիտական աշխարհայացքի ձևավորման և դաստիարակության գործում հաջողությունները մեղմ ասած տպավորիչ չեն: Գաղափարաքաղաքական, գիտաաթեիստական, բարոյական, բնապահպանական դաստիարակչական աշխատանքները չունեն նույն կարևորությունը, թե՛ ուսուցիչների, և թե՛ աշակերտների համար ուստի ֆիզիկայի ուսուցման կրթական բաղադրիչը չի հավասարակշռվում: Ըստ էության, իրավիճակը զարգացել է այնպես, որ դաստիարակությունը կրթությունից հետո միշտ մնացել է երկրորդ տեղում լինելով դրան կամընտիր լրացում:

Կրթության և դաստիարակության միջև գոյություն ունեցող անհավասարությունը, ի վերջո, հագեցնում է սովորողի անձի, նրա կենսական կարևորագույն խնդիրների որոշակի անտեսման և որպես արդյունք նրա անձնական որակների զարգացման նկատելի դեֆորմացման, ակնհայտ է, որ դա չի կարող անրադառնալ սովորողների գիտության և գիտական գիտելիքների օտարման, և, համապատասխանաբար, ֆիզիկայի դասերի նկատմամբ ընդհանուր հետաքրքրության անկման և ակադեմիական առաջադիմության անկման վրա, սա սովորողներ մարդկային բնույթի նրանց կարիքների հետաքրքրություններ արժեքների ուսուցման բովանդակության ու մեթոդների անհամապատասխանության բացասական արդյունքն է: Անձի և գիտելիքների միջև ձևավորված հակասությունները բացատրվում են մի շարք պատճառներով: Նախ և առաջ մինչև վերջերս աշակերտներին ոչ թե որպես ազատ անհատականություն իրենց դրսևորումների և ձգտումների մեջ այլ հիմնականում, որպես պահեստ, կրող և ժմանակակից գիտական գիտելիքների և այլ դիրքորոշման ներկայացուցիչը, որ

գիտելիքն ավելի կարևոր է քան մարդկային իրականությունը՝ ներառյալ սովորողի անձնական խնդիրները, նրա հակումները, կենսական հետաքրքրությունները ու կարիքները: Այնուհետև, չպետք է մոռանալ, որ հասարակության մեջ իրականացվող կրթության ոլորտում գաղափարախոսությունն ու պետական քաղաքականությունը պարտադիր իրականացնում էին մասայական կրթություն՝ առանց հաշվի առնելու անհատ սովորողի անհատականության առանձնահատկությունները: Սա հանգեցրեց առարկայի (սովորողի) և ճանաչողության օբյեկտի (բնական երևույթների աշխարհը) փոխազդեցության և փոխկապվածության խնդրի հոգեբանական ասպեկտների անբավարար զարգացմանը, որը կիրառվում է ֆիզիկայի ուսուցման մեջ: Ընդհանրապես դա բացատրվում էր նրանով, որ սովորողի անհատականությունը, ֆիզիկայի դասերին նրա խնդիրներին ուղղված կոչը համարվում էր գիտության բուն էությունը խորը երևույթ կրթության հետ լիարժեք ուսուցման գործընթացի փոխարինում և, անձաշակության նշան

Գիտության դասակաները ներդաշնակորեն զարգացած անհատականության՝ ընդհունակ և պատրաստ ստեղծագործական գործունեության, դաստիարակության երաշխիքը տեսնում էին գիտական գիտելիքների վերափոխման մեջ, որի ընթացքում ակնհայտ է դառնում գիտության և գիտական կրթության մշակութային արժեքը սովորողի համար

Իհարկե, անհնար է սովորողների համար բացահայտել ֆիզիկայի՝ որպես գիտության մշակութային իմաստները՝ առանց ցույց տալու անհատի դերը գիտական գիտելիքների զարգացման գործում: Սովորողներին հումանիստական արժեքներին սկզբից մինչև վերջ ծանոթացնելու բուն խնդիրը պետք է «խառնվի» հիմնական արժեքի՝ մարդ լինելու մարդկային սկզբունքի հետ: Սովորողի կարիքները, հետաքրքրությունները և արժեքները պետք է իրենց արձագանքը գտնեն այն կարիքների, հետաքրքրությունների և արժեքների մեջ, որոնք որոշել են գիտնականների գործունեության բնույթը և հետագայում արտացոլվում գիտական ու կրթական գիտելիքների մեջ:

Այսօր հանրակրթական դպրոցում հաճախ ենք բախվում աշակերտների ճանաչողական ակտիվության անկման և ուսման մոտիվացիայի բացակայության լուրջ խնդրին: Աշակերտի մոտիվացիայի խթանման խնդիրը ուսուցչից պահանջում է խնդրի լուծման նոր մոտեցումներ, մասնավորապես՝ ուսուցման նոր, ավելի կատարելագործված մեթոդական միջոցների և կազմակերպչական ձևերի մշակում: Պետք է միշտ հիշել, որ ուսուցման գործընթացում կարևոր են ոչ միայն գիտելիքները, այլ նաև այն տպավորությունները, որոնցով երեխան գնում է դասից: Կոնկրետ մոտիվները, որոնք երեխային ստիպում են սովորել որոշում են այն, թե ինչպես կյուրացվի և ինչ կդառնան ձեռք բերված գիտելիքները նրա համար: Յուրաքանչյուր ուսուցիչ ցանկանում է, որ իր աշակերտները լավ սովորեն հետաքրքրությամբ և ցանկությամբ հաճախեն դպրոց: Դրանում շահագործված է նաև աշակերտների ծնողները: Սակայն շատ հաճախ թե՛ ուսուցիչները, թե՛ ծնողները մեծագույն աստիճանով արձագանքում են այն փաստը, որ երեխան չի ուզում սովորել կամ թե կարող է շատ լավ սովորել բայց ցանկություն չունի: Սակայն ժամանակակից ուսուցիչն իրավունք չունի միայն արձանագրելու այդ փաստը ու վերջ պետք է կարողանալ պարզել թե ինչու չի ուզում սովորել մոտիվացիայի ինչպիսի կողմեր նրա մոտ չեն ձևավորվել, երբ և որ դեպքերում չի ուզում սովորել որտեղ են մեծերը թերացել և չեն սովորեցրել նրան ինչպես կազմակերպել վարքը, որպիսզի նրա մոտ ծնվի սովորելու մոտիվացիա: Նման դեպքերում մենք առնչվում ենք այն փաստի հետ, որ սովորողի մոտ չի ձևավորվել գիտելիքների պահանջ և չկա ուսման նկատմամբ հետաքրքրություն: Այսինքն ունենք արժեքային համակարգի ձևավորման խնդիր:

Ուսուցման մեջ առաջնային նշանակություն ունի սերը, հետաքրքրությունը գիտելիքի նկատմամբ: Հետաքրքիր ուսուցումը չի բացառում տրենաջան աշխատելու ունակությունը, հակառակը՝ նպաստում է դրան: Սովորողների մոտիվացիան մեծ հաշվով կախված է ուսուցման յուրաքանչյուր փուլում մանկավարժի նախաձեռնողական դիրքորոշումից: Այդ դիրքորոշման բնութագիրն է հանդիսանում մանկավարժական քննախույզ մտածելակերպի բարձր մակարդակը, խնդրահարույց ուսուցման, աշակերտների հետ րկխոսության մեջ մտնելու սեփական հայացքները հիմնավորելու, մանկավարժական գործունեությունն ինքնագնահատելու ունակությունը և ձգտումը:

Ուսուցումը հետաքրքիր դարձնելու համար դասը պետք է հագեցնել փորձերով, գործնական վարժություններով: Երբ սովորողը կատարում է թեկուզ ամենապարզ գիտափորձը, Այդ ժամ հետաքրքրասիրությունը վերածվում է հետաքրքրության: Ուսուցչի վարպետությունը հենց նրանում է, որ այդ հետաքրքրասիրությունը դարձնի կայուն հետաքրքրություն: Ուսումնական գործընթացի ակտիվացման բովանդակային կողմն են հանդիսանում նյութի հավաքագրումը, խնդրահարույց ուսուցման հիման վրա կրթական և մանկավարժական խնդիրների ձևակերպումը, առաջադրանքների կազմում է: Բոլոր դեպքերում պետք է հաշվի առնել յուրաքանչյուր աշակերտի անհատական ընդունակությունները: Ուսումնական պրոցեսի ակտիվացումը և աշակերտների

ուսուցման մոտիվացումը սկսվում է մանկավարժական գործունեության հայտորոշումից և ճիշտ նպատակադրումից:

Սա աշխատանքային առաջին փուլն է: Ընդ որում ուսուցիչը առաջին հերթին չի մոռանում ստեղծել վստահություն և դրական զգացմունքային վերաբերմունք սեփական անձի և գործունեության նկատմամբ:

## **ԵՉՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ և ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

**1.** Արժեքային համակարգը ձևավորվում է մտավոր, բարոյական , աշխատանքային, գեղագիտական, ֆիզիկական , իրավական տնտեսագիտական , Էկոլոգիական դաստիարակվածության արդյունքում

**2.** Ֆիզիկայի դասերին դաստիարակության խնդիրը պետք է հիմնված լինի մարդկային գործոնի գաղափարի օգտագործման վրա՝ որպես գիտության գործառույթյան որոշիչ սկիզբ: Ուսուցչի ակտիվ կենսական դիրքորոշումը, նրա գիտելիքների ու հետաքրքրությունների լայնույթը խոր համոզմունքով և հուզականորեն հագեցած ուսումնական նյութի շարադրման բարձր մակարդակը շատ առումներով կապահովեն ֆիզիկայի ուսուցչի դաստիարակչական աշխատանքի հաջողությունը:

Ուսուցման ճիշտ, համապատասխան մեթոդների ընտրությունը նպաստում են սովորողների արժեքային համակարգի ձևավորումը <<Ֆիզիկա >> առարկայի դասավանդման ընթացքում:

**3.** Ֆիզիկայի զարգացումը նպաստում է տեղեկատվական հասարակությանն անցնելու պայմանների ստեղծմանը, քանի որ Էլեկտրոնային սարքերի , օպտիկական համակարգերի և այլնի շարունակական զարգացման հիման վրա տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների կիրառման շրջանակը բարելավվում և ընդլայնվում է :Արբանյակային համակարգերի, օպտիկամանրաթելային հաղորդակցության, ռոբոտաշինության կատարելագործում նանոտեխնոլոգիաների, տիեզերական հետազոտությունների զարգացում:

**4.** Սովորողներին հումանիստական արժեքներին սկզբից մինչև վերջ ծանոթացնելու բուն խնդիրը պետք է <<խառնվի>> հիմնական արժեքի՝ ՄԱՐԴ լինելու մարդկային սկզբունքի հետ :Սովորողի կարիքները, հետաքրքրությունները և արժեքները պետք է իրենց արձագանքը գտնեն այն կարիքների, հետաքրքրությունների և արժեքների մեջ, որոնք որոշել են գիտնականների գործունեության բնույթը և հետագայում արտացոլվում գիտական և կրթական գիտելիքների մեջ:

## ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Ա. Մամյան , Ն. Նուրբեկյան:-Եր. ֆիզիկա 7-9 ուսուցչի ձեռնարկ:
2. [www.amedu.am](http://www.amedu.am) համացանցային կայքը:
3. [forum.amedu.am](http://forum.amedu.am) համացանցային կայքը:
4. Մուղրիկ Ա. Վ. Դպրոցականի անձը և նրա դաստիարակությունը կոլեկտիվում ,  
Երևան 1986թ:

